ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

375023, ք. Երևան, Արշակունյաց 7,
☎ + (3741) 587828
Ֆաքս + (3741) 526562

27.05.09 № Ա-1/2114.

Ձեր_____ առ _____

Հայաստանի Հանրապետության կառավարության
աշխատակազմի ղեկավար
պարոն Դ.Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան

Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի N 734-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Արմավիրի մարզի Մուսալեռ, Փարաքար և Պտղունք համայնքներում 140.6 հա հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առանձնահատկություն սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը՝ համապատասխան հիմնավորումներով:

Առդիր՝ 16 թերթ և 1 էլեկտրոնային կրիչ:

Հարգանքով՝ Ե.Զախարյան

Կատարող՝
Ա.Մուսայան
525481

52

107-7407
01 06 09

Դ. Սարգսյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«_____» «_____» 2009 թվականի N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 734-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ, ՓԱՐԱՔԱՐ ԵՎ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 140.6 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2006 թվականի ապրիլի 18-ի N ՍԴՈ-630 որոշումը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի «Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի վերակառուցման ու ընդարձակման ծրագրի իրականացման միջոցառումների մասին» N 734-Ն որոշումը:

2. Սահմանել, որ Արմավիրի մարզի Մուսալեռ, Փարաքար և Պտղունք գյուղական համայնքների տարածքում գտնվող՝ սույն որոշման հավելվածում նշված 140.6 հա հողերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ առաջարկությունները կարող են ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը միայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության դրական եզրակացության դեպքում:

/ Ե.Զախարյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության կառավարության
2009 թվականի_____«_____»
№_____-Ն որոշման



Փարաքար համայնք

	Նպատակային նշանակությունը	Հողատեսքերի գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)
1	Գյուղատնտեսական	Վարելահող	67.5388
2		Խաղողի այգի	10.5342
3		Պտղատու այգի	12.3339
4		Այլ հողատեսքեր	16.4745
5	Բնակավայրերի	Ընդհանուր օգտագործման	1.3198
6		Հասարակական	0.6518
7	Արդյունաբերական	Արտադրական	0.2003
8	էներգետիկայի	էներգետիկայի	0.0123
Ընդամենը համայնքային (75 հողամաս)			17.7098
Ընդամենը քաղաքացու սեփականություն (565 հողամաս)			91.3557
Ընդամենը			109.1

Մուսալեռ համայնք

	Նպատակային նշանակությունը	Հողատեսքերի գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)
1	Գյուղատնտեսական	Վարելահող	9.7354
2		Խաղողի այգի	8.95
3		Պտղատու այգի	0.6065
4		Այլ հողատեսքեր	2.9652
Ընդամենը համայնքային (14 հողամաս)			2.9736
Ընդամենը քաղաքացու սեփականություն (145 հողամաս)			19.292
Ընդամենը			22.3

Պտղունք համայնք

	Նպատակային նշանակությունը	Հողատեսքերի գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)
1	Գյուղատնտեսական	Վարելահող	4.0718
2		Խաղողի այգի	4.3987
4		Այլ հողատեսքեր	0.6341
8	Ջրային	Առու	0.1718
Ընդամենը համայնքային (2 հողամաս)			0.8059
Ընդամենը քաղաքացու սեփականություն (53 հողամաս)			8.4705
Ընդամենը			9.3

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 734-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ, ՓԱՐԱՔԱՐ ԵՎ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 140.6 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը /նպատակը/

Ներկայացվող որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2006 թվականի ապրիլի 18-ի N ՍԴՈ-630 որոշման և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի պահանջներից :

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի Հանրապետության կառավարության 06.06.2002 N 734-Ն որոշմամբ սահմանվել է «Զվարթնոց» օդանավակայանի տարածքին հարող՝ պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի (հողամասեր, շենքեր, շինություններ) օտարման գոտին: Օտարման գոտին սահմանվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218 և ՀՀ հողային օրենսգրքի 104 հոդվածներին համապատասխան: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2006 թվականի ապրիլի 18-ի N ՍԴՈ-630 որոշմամբ սահմանվեց, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածը և ՀՀ հողային օրենսգրքի՝ 104 հոդվածը՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների կանոնակարգման առումով չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43 հոդվածների պահանջներին: Ներկայումս հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հայաստանի Հանրապետության կառավարության 06.06.2002 N 734-Ն որոշման ընդունման համար հիմք ենք հանդիսացել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218 և ՀՀ հողային օրենսգրքի 104 հոդվածները, որոնք Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2006 թվականի ապրիլի 18-ի N ՍԴՈ-630 որոշման համաձայն՝ նման իրավահարաբերություններ կարգավորման առումով չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը: և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների համաձայն՝ իրավական ակտի գործողության դադարեցման հետ միաժամանակ համապատասխանաբար գործողությունը դադարեցված են ճանաչվում նաև այդ իրավական ակտի համաձայն կամ ի կատարումն դրանց ընդունված նորմատիվ իրավական ակտերը կամ իրավական նորմերը, եթե իրավական ակտի գործողությունը դադարեցնելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: Միևնույն ժամանակ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Հասարակության և պետության

կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով: «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն եթե իրավական ակտը հակասում է հետագայում ուժի մեջ մտած ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի պահանջներին, ապա իրավաստեղծ մարմինը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, պարտավոր է իր ընդունած իրավական ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին ընդունել իրավական ակտ:

2. Կարգավորման առարկան

Ներկայացված նախագծի կարգավորման առարկան վերաբերում է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքին հակասող իրավական ակտի գործողության դադարեցմանը: Միաժամանակ, հաշվի առնելով Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի հնարավոր ընդլայնման անհրաժեշտությունը, նախագծի 2-րդ կետով նախատեսվում է օդանակավակայի տարածքին հարող հողերի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ առաջարկությունները պարտադիր համաձայնեցնել ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության հետ: ՀՀ կառավարության որոշմամբ նման առանձնահատկության սահմանման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը ընդգրկված չէ ՀՀ կառավարության 14.01.2002թ. «Հողային պաշարների պետական կառավարման լիազոր մարմիններ սահմանելու մասին» N 26 որոշմամբ սահմանված մարմինների կազմում: Հետևաբար, հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծեր նախապատրաստելիս, այդ նախագծերը ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության հետ չեն համաձայնեցվում: Այդ իսկ պատճառով ներկայացվող նախագծով սահմանվում է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի հնարավոր ընդլայնման համար անհրաժեշտ հողերի նպատակային նշանակության փոփոխության դեպքում ՀՀ կառավարության համապատասխան նախագծերը ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության հետ համաձայնեցնելու պարտադիր պահանջը:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Ներկայացված որոշման ընդունման դեպքում, կդադարեցվի ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի պահանջներիններկայումս հակասող իրավական ակտի գործողությունը, ինչպես նաև կապահովվի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի հնարավոր ընդլայնման համար անհրաժեշտ հողերի ներկայիս նպատակային նշանակության փոփոխության համապատասխանեցումը օդանավակայանի հետագա զարգացման միտումներին:

/ Ե.Զախարյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 734-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ, ՓԱՐԱՔԱՐ ԵՎ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 140.6 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի N 734-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Արմավիրի մարզի Մուսալեռ, Փարաքար և Պտղունք համայնքներում 140.6 հա հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առանձնահատկություն սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի առաջացնում:

/ Ե.Զախարյան

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 734-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ, ՓԱՐԱՔԱՐ ԵՎ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 140.6 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի N 734-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Արմավիրի մարզի Մուսալեռ, Փարաքար և Պտղունք համայնքներում 140.6 հա հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առանձնահատկություն սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումն այլ իրավական ակտերում փոփոխություններ չի առաջացնում:

/ Ե.Զախարյան

ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 734-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ, ՓԱՐԱՔԱՐ ԵՎ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 140.6 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի N 734-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Արմավիրի մարզի Մուսալեռ, Փարաքար և Պտղունք համայնքներում 140.6 հա հողամսերի նպատակային նշանակության փոփոխման առանձնահատկություն սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և Հայաստանի Հանրապետության օրենքներին:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի իրավաբանական և օրենսդրության մշակման բաժնի պետ Ա.Հարությունյան

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 734-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ, ՓԱՐԱՔԱՐ ԵՎ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 140.6 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դիտողությունները և առաջարկությունները	Դիտողությունների և առաջարկությունների ընդունման կամ մերժման հիմնավորում
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն	
Նախագծի 1-ին կետում «հունիսի 1-ի» բառերը անհրաժեշտ է փոխարինել «հունիսի 6-ի» բառերով	Ընդունվել է, կատարվել է փոփոխություն
Նապագիծը պետք է համապատասխանեցվի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին	Ընդունվել է, հավելվածը լրամշակվել է
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն	
Նախագծի 2-րդ կետի անհրաժեշտությունը չկա, քանի որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը և ՀՀ Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի թիվ ՆՀ-174-Ն հրամանագրի 40-րդ կետն արդեն իսկ ամրագրել են շահագրգիռ պետական մարմինների հետ համաձայնեցման պահանջ: Հաշվի առնելով վերոշարադրյալը համապատասխանաբար վերախմբագրման կարիք ունի նաև նախագծի վերնագիրը:	Չի ընդունվել, քանի որ ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը որպես կանոն չի հանդիսանում շահագրգիռ պետական մարմին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ ՀՀ կատավարության որոշումների նախագծերի համաձայնեցման առումով: Այդ իսկ պատճառով, նախագծի 2-րդ կետով սահմանված համաձայնեցման առանձնահատկության անհրաժեշտությունը առկա է:
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	
Նախագծի անվանման մեջ և 2-րդ կետում «272 հա» բառերը անհրաժեշտ է փոխարինել «140.6 հա» բառերով, այն համապատասխանեցնելով նախագծի կից հավելվածին	Ընդունվել է, կատարվել է փոփոխություն
Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն	
Դիտողություններ և առաջարկություններ չունի	
Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	
Դիտողություններ և առաջարկություններ չունի	
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	
Դիտողություններ և առաջարկություններ չունի	

Ե.Զախարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
MINISTER OF JUSTICE OF THE REPUBLIC OF ARMENIA

ք.Երևան 375099, Հալաբյան 41-Ա
հեռ.380385

«---6---» «---05---» 2009թ. N 42452

Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի
նախագահի տեղակալ
Պարոն Ա. Մուսայանին

Ի պատասխան Ձեր 2009թ. ապրիլի
28-ի ԱՄԴ-3/1667 թվակիր նամակի

Հարգելի պարոն Մուսայան

Կից ներկայացնում ենք «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի թիվ 734-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Արմավիրի մարզի Մուսալեռ, Փարաքար և Պտղունք համայնքներում 140.6 հա հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առանձնահատկություն սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

Հարգանքով՝ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

կատ՝ Իրավական ակտերի փորձաքննության վարչություն
/հեռ.380386/

08 05 09

3215

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի թիվ 734-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Արմավիրի մարզի Մուսալեռ, Փարաքար և Պտղունք համայնքներում 140.6 հա հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առանձնահատկություն սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի թիվ 734-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Արմավիրի մարզի Մուսալեռ, Փարաքար և Պտղունք համայնքներում 140.6 հա հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առանձնահատկություն սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ նախագծի 2-րդ կետի անհրաժեշտությունը չկա, քանի որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի թիվ ՆՀ-174-Ն հրամանագրի 40-րդ կետն արդեն իսկ ամրագրել են նորմատիվ իրավական ակտի նախագծերը շահագրգիռ պետական մարմինների հետ համաձայնեցման պահանջ: Հաշվի առնելով վերոշարադրյալը համապատասխանաբար վերախմբագրման կարիք ունի նաև նախագծի վերնագիրը:

ՀՀ արդարադատության նախարարի
առաջին տեղակալ՝ Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

Իրավական ակտերի փորձաքննության
վարչության պետ՝ Կ. ԽՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող., 1
Հեռ.՝ (+374 10) 59 53 04
Ֆաքս՝ (+374 10) 52 42 82
էլ. փոստ՝ minister@minfin.am
Վեբ կայք՝ www.minfin.am

09.04.09 N 4/4-6-3-2408

Ձեր N _____

ՀՀ կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի նախագահ
պարոն Ե. Զախարյանին

Հարգելի պարոն Զախարյան

Ձեր 26.03.09թ. N ՄՎ-3/1158 գրությամբ ներկայացրած՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի N 734-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Արմավիրի մարզի Մուսալեռ, Փարաքար և Պտղունք համայնքներում 272 հա հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առանձնահատկություն սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ

1. Նախագծի 1-ին կետում «հունիսի 1-ի» բառերը անհրաժեշտ է փոխարինել «հունիսի 6-ի» բառերով:

2. Նախագիծը պետք է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին:

Հարգանքով՝ Տ.Դավթյան

Կատ. Կ.Խոջաբեկյան
հեռ. 595-257

09 04 09

2579

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

375010, Երևան - 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 3, հեռ. 524-641, ֆաքս 523-793

Ձեր _____ N _____ 07-149-09-1428 N 03.04.09թ.

ՀՀ կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի նախագահ
պարոն Ե. Զախարյանին

Հարգելի պարոն Զախարյան,

Ձեր 26.03.09թ. ՄՎ-3/1158 թվակիր գրությամբ ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի № 734-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Արմավիրի մարզի Մուսալեռ, Փարաքար և Պտղունք համայնքներում 272 հեկտար հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առանձնահատկություն սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չկան:

Հարգանքով՝ Ա. Գրիգորյան

Հողերի օգտագործման
և մելիորացիայի վարչություն
☎ 297433

08 04 09

2502

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

0010, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ
Կառավարական տուն 3
Հեռ.՝ 589080 Ֆաքս՝ 523200
www.mud.am
E-mail:info@mud.am

02.04.09թ. N ՄՎ-26/1183

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի
կադաստրի պետական կոմիտեի նախագահ՝
պրն. Մ. Վարդանյանին

Հարգելի պարոն Վարդանյան.

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը Ձեր 2009 թվականի մարտի 26-ի N ՄՎ–3/1158 գրությամբ ներկայացրած «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի N 734-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Արմավիրի մարզի Մուսալեռ, Փարաքար և Պտղունք համայնքներում 272 հա հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առանձնահատկություն սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և առարկություններ չունի:

Հարգանքով՝

Վ. Վարդանյան

Ս. Մաթևոսյան
52.04.76

03 04 09

2403

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

N 1.1-242
«06» 04 2009

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր անշարժ գույքի
կադաստրի պետական կոմիտեի նախագահ
պարոն Ե.Զախարյանին

Հարգելի պարոն Զախարյան

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 26.03.2009 թ-ի N ՄՎ-4/1158 գրության, հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի N 734-Ն որոշումն ուժի կորցրած ճանաչելու և Արմավիրի մարզի Մուսալեռ, Փարաքար և Պտղունք համայնքներում 272 հա հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առանձնահատկություն սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում է նախագծի անվանման մեջ և որոշման 2-րդ կետում «272 հա» բառերը փոխարինել «140.6 հա» բառերով, այն համապատասխանեցնելով նախագծի կից հավելվածին:

Հարգանքով

Գլխավոր վարչության պետ Ա.Մովսեսյան

կատ.Գ.Նազարյան
հեռ.593031

08 04 09.

2491

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, «ԶՎԱՐԹՆՈՑ» օդանավակայան, Հեռ.՝ (374 10) 282-066, Ֆաքս՝ (374 10) 285-345

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 2

«21» 04 2009թ. N 03/16/2297-09

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի
կադաստրի պետական կոմիտեի նախագահ
պարոն Ե. Զախարյանին

Ձեր 26.03.2009թ.
թիվ ՄԿ-1/1158

Հարգելի պարոն Զախարյան

Հայտնում եմ, որ Ձեր ներկայացրած «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. հունիսի 6-ի N 734-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Արմավիրի մարզի Մուսալեռ, Փարաքար և Պտղունք համայնքներում 272հա հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առանձնահատկություն սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝ Վ. Տերտերյան

21 04 09

Տեղական ինքնակառավարման
վարչություն, հեռ. 511-344

1/460.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРМАВИРА

«10» 04 2009 թ.

N 814

Ամ/ 0389

ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ,
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Գևորգյան

Ի կատարումն Ձեր 02.04.2009թ. թիվ 01/16/1843-09 հանձնարարականի՝ հայտնվում է, որ ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետարանում կատարվել են քննարկումներ, և դիտողություններ ու առաջարկություններ չկան:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կատ՝. Ա. Դարբինյան
Հեռ 6-32-05

10/3792-09
16 04